ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐԵ ՊԱՏԱՐԱԳ

Ծիծեռնակաբերդ մատյան դու քարե,
Դու մի ակնթարթ հավիտենացած,
Անյունասափոր դու սև մարմարե,
Հայոց Ապրիլի մոխիրով լցված:

Ծիծեռնակաբերդ, դու մի պտղունց հող,
Ծիծեռնակի հին բույն դու կարկատված,
Ինչպե՞ս ես պահում դու գրանիտ բարով
Երկու միլիոնի երկինքը մորթված:

Եվ տքնում ես դու մութ գիշերներում
Երբ երկինք նետված տապանագրերի,
Անուններն են որ լույս են փորագրում,
Քար խղճի վրա ժամանակների:

Ծիծեռնակաբերդ, դու թաց կոպերից
Մի կաթիլ արցունք դառնահամ ու տաք,
Դու հյուլեաչափ անավոր կսկիծ,
Դու եղեռնակոծ քարե պատարագ:

Ծիծեռնակաբերդ դու քարե հրդեհ,
Դու Զվարթնոցի պահը փլուզման
Այդ ինչպե՞ս պիտի նժարդ բռնեն
Որ հառաչանքիդ կշռույթն իմանան:

Ծիծեռնակաբերդ դու կոպերն իմ թաց,
Դու ամենամեծ վիշտը հայրենի,
Միացող դու վերք, վերք հավիտյան բաց,
Դու սև ձյուն իջած մեր Մասիսներին:

Ծիծեռնակաբերդ դու մեր օրհասի
Վարուժանյան երգ արյունի պես տաք,
Խենթացող ձայնը մեր Կոմիտասի,
Հավիտենասուգ քարե պատարագ,
Յավի պատարագ, Հայոց պատարագ
Հավերժության լուրթ կամարների տակ...

Երևան, ապրիլ 24, 1968